

ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՈՒՂՂՈՒՄ

1. ՄԺ, 11, էջ 404, 16-րդ տողի շարունակությունը.

Թուրքաց երկրի խարճ, դանակ տեստեն ԺԵ (15) չէոկի լաւն, Բ (2) ծիթնար, դեղին թէնէքէ, ծիթնարն Խ (40) թուվարտի, Ասեղին Ռ (1000)-ն գինն ԺԶ (16) չէսկի:

Ե[ր?]կան իւան տիլի չալլի, պոյն Ե (5) թիզ ու նեղ լինի, գինն ԼԲ (23) թուվարտի Ճ (100)-ն:

Ածեկի, վրան դրվածն, գինն ԺԴ (14) չէսկի՝ տեստեն, առանց գինն՝ ԺԲ (12) չէսկի:

Լաւ թուրն, վրան գրված յեալտզով, գինն մէկ-մէկ թուրվարտի, Օրթա պոյ թուրին գինն է թուվարտի, դէստեն ԺԲ (12) հատ է:

Կնկան մատնոց գինն ԼԸ (38) չէոկի տուզինըն, Ֆոանցուսի մատնոց գինն Ծ (50) չէսկի:

Ճերմակ սիմ գինն՝ տեստեն ԺԴ (13)-ական չէսկի:

Ղատախ գինն տեստեն է (7) ու կէս չէսկի (ուրիշ գրչէ). Մանտր դանակ՝ ԺԱ (11) տեստեն մէկ թուվարտի:

Աղբզ դոփուզի գինն՝ տեստեն Ը (8)-ական չէսկի: Սև կոթ դանակ գինն՝ տեստեն ԻԵ (25) չէսկ ու կէս:

Դեղին չախմախ տեստեն ԺԲ (12)-ական չէսկի:

Պոնճուխներ՝ ճերմակ, դեղին, կապուտ, գինն տեստեն ԺԵ (15)-ական չէսկի:

Կարմիր սուտ մէրճան, տեստեն գինն ԺԸ (18)-ական չէսկի: Առանց գիր դեղին շամտան, տեստեն ԻԵ (25) չէսկի, վրան գրած մեծ շամտաներ կան՝ Բ (2)-ն մէկ տեստէ, Դ (4)-ն մէկ տեստէ, Զ (6)-ն մէկ տեստէ, գնեըն՝ մեկին ԾԵ (55) չէսկի, Ծ (50) չէսկի, ԽԵ (45) չէսկի:

Մանտր մկրատներուն գինն տեստեն ԻԴ (24) չէսկի, մեծերուն գինն ԼԵ (35) չէոկի, օրթայ պոյն Լ (30) չէսկի: Չախու գինն մէկ-մէկ թուվարտի ցածն, լաւն Հ (70) չէսկի տեստեն, մանտրերուն գինն լաւն Ծ (50) չէոկի:

Մոմի մկրատ, տեստեն ԻԵ (25) չէսկի. և այլ մանտր դանակ, տեստեն ԾԶ (56) հատ է, գինն ԽԹ (49) չէսկի:

Մեծ հայլիին գինն մէկ թուվարտի:

Պիպեոի չաղացներուն գինն Ի (20) չէսկի, օրթայ պոյ հայլիին գինն տուզին մէկ թուվարտի:

Նիրընպէոքու մաանեստանունն դինն տուզինան 45-ական չէսկի, լաւն ու ցածն մէկ զմէկի վրայ:

Չախմախ քարն Ճ (100) մէկ թինֆ: Քառթայ լաւն է (7) չէսկի, ցածն՝ 6 չէսկի: Ավել 25-ն ԾԶ (56) չէսկի:

2. ՄԺ-ի 1-ին հատորում (էջ 262—264, ընագիրը՝ 265—277) ժամանակագրական մի ընագիր վերագրել էինք Լիվոռնոյի մի հայի, սակայն, ինչպես հետագա փաստերը ցույց տվեցին, այդ պնդումը չի համապատասխանում իրականության և այդ ընագրի հեղինակի հարցը բոլորովին այլ լուսաբանություն է ստանում:

Մատենադարանի № 8463 ձեռագրի վերջին մասի հետ կազմված է նույն չափի ութ տպագիր թերթ (206—212). Տպագիր այս թերթերից երկուսը Կարապետ վարդապետի խրատն է, հետևյալ վերնագրով. «Կարապետի վարդապետի խրատք պիտանիք մանկանց եկեղեցւոյ» (206—207), իսկ մնացածն ունի «Համառօտ վիպասանութիւն յաղագս ժամանակաց կենցաղոյս ի յիսկզրանէ ստեղծման աշխարհի մինչև զհերկայական տմանակս մեր» խորագիրը և հետևյալ ծանուցումը «և վասն առաւել կարեւոր ե պիտանացու իրաց եղելոց առ ի բառնալոյ զամենայն կարծիս և զերբայութիւնս ի մտաց. վասն որոյ պիտոյ է դիտել զթիւ ամաց անցելոցն իրաց, նախահարցն և թագաւորացն և քաջ արանց ոմանց մեծագունից» (էջ 208ա). Այնուհետև տրվում է թարգմանչի տեղեկությունը. «Թարգմանեցեալ ի Ջաքարիայ Սիւնեցւոյ բանասիրի ի լատին բարբառոյ ի հայս, և ի հայոց ևս արտաքարշեալ առ ի պետոս հայկադունեանց ճշմարտասիրաց»:

Այս ընագիրը սկսվում է. «Արդ ուրեմն պարտէ գիտել զի յԱզամայ մինչև ի Յովսէփն են ամք 2198» և այլն, Բնագիրը վերջից պակասավոր է: Վերջինս, երբ համեմատում ենք Անանուն Լիվոռնոցու ժամանակագրության հետ, նկատում ենք, որ դրանք նույն բանն են: № 8463 ձեռագրում պահվել է մեր հրատարակության 265 էջից մինչև 269 էջի 25-րդ տողը՝ «Սորա լեալք որդիք երեք՝ Բար, Տիրան և Վահագն, որ» հատվածը:

Ինչպես պարզվում է վերեի մեջբերումից, այդ ժամանակագրության հեղինակը լատինացի է, ընագիրն էլ եղել է լատիներեն, որը հայերեն թարգմանվել է 1683 թ. Ջաքարիա Սյունեցու կողմից: Բնագրի «և ի հայոց ևս արտաքարշեալ» բառերը ցույց են տալիս, որ թարգմանությունը չի կատարված բառացի, այլ հայոց պատմությունից էլ բազմաթիվ տեղեկություններ մուծված է ժամանակագրության մեջ:

Արդ՝ ով է Ջաքարիա Սյունեցին, որը իրեն կոչում է բանասեր: Սրա մասին եղած ներքոհիշյալ տեղեկությունները շնորհակալությամբ քաղել ենք ընկ. Հ. Ս. Անասյանի «XVII դարի արեւմտահայ ազատագրական շարժումների պատմությունից» (պատմական հետազոտություն) անտիպ աշխատությունից: Պարզվում է, որ Ջաքարիա Սյունեցին քաղաքական նկատառումներով Մատենի Շահմուրատի, Հովհաննես Թութունջիի և ուրիշների հետ 1683 թ. լինում է Վերսայում (И. А. Орбели, «Описание Версаля в армянской записи 1683 года», Известия Российской Академии Истории материальной культуры, т. I, № 33, 8 Февраля 1921 г., стр. 391—399):

Այնուհետև ընկ. Հ. Ս. Անասյանը գրում է. «Ջաքարիա Սիսիանցին, որը կոչվում էր և Սյունեցի, նմանապես հայտնի անձնավորություն էր, ծննդով՝ Հայաստանի պատմական Սյունյաց նահանգի Սիսիան գավառից, գուցե և համանուն գյուղից (այժմյան Սիսիանի շրջան): Նա, ինչպես Խաչատուր Գաղատացին, լատին միսիոնար Կղեմես Գալանոսի աշակերտն էր. ուստի պատկանում էր հայ հոգևորականության ժամանակի լատինասեր

կուսակցութեանը. 1650-ական թվականներին ապրում էր Հալեպում և գրական աշխատանքներով էր պարապում¹, նրա մտավորական աշխատանքների արդյունքն է և մի համառոտ ժամանակագրութուն, որ ինքը թարգմանել է լատիներենից և մասամբ լրացրել հայկական աղբյուրներից, և, 1683 թվին, երբ Ֆրանսիայում էր գտնվում, տպագրել է տվել «Համառոտ վիպասանութիւն յաղագս ժամանակաց կենցաղոյս»² վերնագրով (էջ 164—165)։

3. ՄԺ, 1, էջ 383. Մի անանուն ժամանակագրութեան մասին դրել էինք, որ այն կաղմված է երկու, իրարից անկախ, հատվածներից, տարբեր անձնավորութիւնների կողմից, այդ բանի համար նշելով Մատենադարանի № 482 ձեռագրի 54ա էջում պահված մի հատվածը, որը վերոհիշյալ Անանունի երկրորդ մասն է։ Սակայն հիշյալ ընագրի առաջին հատվածը, որը չէինք նկատել ավելի վաղ, գտնում ենք նաև նույն № 482 ձեռագրի մի այլ մասում (էջ 15բ)։ Այդ հանգամանքը մի նոր ապացույց է մեր վերահիշյալ եղբակացութեան։ Հրատարակութեան բնագրում (էջ 384, տող 17) վերջանակ տրեւել էր ի նոցանէն-ի տպված է տրեւարեւել էր ի նոցանէն»

¹ Հոռմի վատիկանյան Մատենադարանի հայերեն ձեռագրերից մեկի՝ Codex Borgianus Armenus № 24 ձեռագրի ընդօրինակողն է Ջաքարիա Սյունեցին, ինչպես կարգում ենք նրա հիշատակարաններում. «Արաբեցաւ սուրբ մատեանս ի թուականիս Հայոց ՌՃԱ ի նոյնմբերի Ի. ի քաղաքն Տիբերայ որ է Ալապ, ի ձեռն յոքնամեղ տէր Ջաքարիա Սիւնեցւոյ, աշակերտի Կղեմէս աստուածաբան վարդապետի, ի վախճան իւրոյ անձին, և յիշատակ իւրն և ընտանեաց իւրոց» (էջ 396բ) և «Յիշատակայ դիբքս Սիսիւնացի տէր» (էջ 423բ), հմմտ. F. C. Conybeare, «Codices armeni Bybliothecae Vaticanae» etc. Romae. 1927, p. 31: Ջաքարիա Սյունեցուց ծանոթ է նաև 1643 թվից չափածո մի հիշատակարան, նոյն մատենադարանի՝ Codex Vaticanus Armenus № 16 (էջ 102բ), հմմտ. F. C. Conybeare, Ibidem, p. 277. Մեր կարծիքով նույնինքն սա է այն Ջաքարիա զպիրը (Zacharias clericus), որը 1641 թ. Գալանոսի հետ Կ. Պոլսից Հռոմ գնացող երեք հայերից մեկն էր, տես՝ Cl. Gulianus «Conciliationis Ecclesiae Armenae cum Romanae», pars I, Romae, 1650, p. 184. Idem, «Historia armena ecclesiastica et politica», Coloniae 1686, p. 244—5. Տ. Ս. Ա.։

² Տես հետևյալ հրատարակութեան մեջ. Շիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուեսաղիբզ, Մարտիրոս, 1683, էջ 289—320, Կա նաև առանձին հանված, հմմտ. Գ. Ջարրհանայան, «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 320—321։

Տպագրութիւնը մնացել է անավարտ և հետևաբար տեքստի պարունակութիւնը չի հասնում մինչև հեղինակի ժամանակը։ Տ. Ս. Ա.։